

L. S. Snygg

copy of
recept

891.715
5-80

1938.

Լ. ՏՈԼՍՏՈՅ



ՅԵՐԵՐ
ԱՐՁԻ ՀԵՔՅԱԹԸ

891.715
5-80

ՊԵՏԿՈՍ

2011-0

L. S O L U S O S

891.710
S-80 4.

ՅԵՐԵՔ ԱՐՋԻ ՀԵՔՅԱԹԸ

Փոխադր.
Հովհ. Փռւմանյանի

ՊԵՏՅՐԱՏ

ՀԼԵՑԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

11.10.2013

3379



1652

38



1.

Մի աղջիկ է լինում: Ես աղջիկը մի անգամ դուրս է գալիս իրենց տնից ու գնում ընկնում անտառը: Անտառում մուրրվում է, ճամփի յե ման գալիս, ճամփա չի գտնում ու գալիս է դեմ առնում մի տնակի:

Դուռը բաց է լինում: Նայում է, տեսնում է տանը փոշվոր չկա:



Ներս է մտնում: Դու մի ասի՛ր ես տեսա-
կում յերեք արջ են ապրում — հերը, մերը
և իրանց քոթոթը: Ետ ժամանակ գնացած են
լինում անտառ ման գալու: Տնակն
ունենում է յերկու սենյակ, մինը սեղանա-
տուն, մյուսը ննջարան:



Ես աղջիկը սեղանատունն է մտնում,
տեսնում է սեղանի վրա դրած յերեք աման:
Առաջինը, հոր ամանը, մեծ է լինում, յերկ-
րորդը, մոր ամանը, միջակ, յերրորդը, քոթո-

Թի՛ ամանը, փոքրիկ: Ամեն մի ամանի մուտ
եղ մի-մի գդալ ե լինում դրած — մեծ, մի-
շակ ու փոքր:


Աղջիկն առնում ե մեծ գդալը, ուտում
մեծ ամանից, անհամ ե լինում:


Հետո վերցնում ե միշակ գդալը, ուտում
ե միշակ ամանից, դուր չի գալի:

Հետո վերցնում ե փոքր գդալը, ուտում
ե փոքր ամանից: Տեսնում ե փոքր ամանի
ապուրը համով ե:

Ուզում ե նստի՛ տեսնում ե յերեք ա-
թո՞ մինը մեծ, մյուսը միշակ, յերրորդը
փոքր: Բարձրանում ե մեծ աթոռին՝ վեր
ե ընկնում: Նստում ե միշակ աթոռին՝ տես-
նում ե անհարմար ե: Նստում ե փոքր ա-
թոռին՝ քեֆը գալիս ե, ենքան լավ ե լի-
նում: Վերցնում ե փոքր ամանը, դնում ե
ծնկներին ու սկսում ե փոքր գդալով ուտել:


Ուտում ե կշտանում ու սկսում ե որոր-
վել աթոռի վրա:





Աթոռը կտարվում է, աղջիկը վեր է ընկնում: Վեր է կենում, աթոռը յետ բարձրացնում ու մտնում մյուս սենյակը:

Մյուս սենյակում յերեք մահճակալ է լինում—մինը մեծ, մյուսը միջակ, յերրորդը փոքր:



Պառկում է մեծ մահճակալի վրա՝ տեսնում է շատ է լին: Միջակի վրա յե պառկում՝ տեսնում է շատ է բարձր: Փոքրի վրա յե պառկում՝ տեսնում է հենց իրենն է վոր կա, ու քնում է:

2.

Արջերը քաղցած գայիս են, վոր ճաշեն: Հերը մոտենում է իր ամանին, մտիկ անում ու զարհուրելի գոռում.



— ԵՍ Ո՞Վ Ե ԿԵՐԵԼ ԻՄ ԱՄԱՆԻՑ:

Մերը մտիկ ե անում իր ամանին ու փնթփնթում:

— ԵՍ Ո՞Վ Ե ԿԵՐԵԼ ԻՄ ԱՄԱՆԻՑ:

Քոթոթն ել փոր տեսնում ե իր զատարկ ամանը ծրմբրում ե):*

— Ես ո՞վ ե կերել իմ ապուրը:

**) Ծմբուլ—կամաց ձայն հանել:*

Հերը նայում ե իր աթոռին ու փրնթփրնթում:

— ԵՍ Ո՞Վ Ե ՆՍՏԵԼ ԻՄ ԱԹՈՌԻՆ ՈՒ ՏԵՂԻՑ ԺԱԺ ՏՎԵԼ:

Մերն ե նայում իր լաթոռին ու փրնթփրնթում:

— ԵՍ Ո՞Վ Ե ՆՍՏԵԼ ԻՄ ԱԹՈՌԻՆ ՈՒ ՏԵՂԻՑ ԺԱԺ ՏՎԵԼ:

Քոթոթը նայում ե իր կոտրած աթոռին ու ծրմբրում ե:

— Ես ո՞վ ե նստել իմ արոռին ու կոտրել:

Մտնում են մյուս սենյակը:

Հերը նայում ե իր մահճակալին ու զարհուրելի գոռում:

— ԵՍ Ո՞Վ Ե ՊԱՌԿԵԼ ԻՄ ԱՆԿՈՂՆԻՆ ՈՒ ՏՐՈՐԵԼ:

Մերը նայում ե իր մահճակալին ու փնթփնթում:

— ԵՍ Ո՞Վ Ե ՊԱՌԿԵԼ ԻՄ ԱՆԿՈՂՆԻՆ ՈՒ ՏՐՈՐԵԼ:

Քոթոթն ել նայում ե իր անկողնին ու ծրմբրում:



— Ես ո՞վ ե պառկել իմ անկողնում:
Հանկարծ աղջկանը նկատում է ու են-
պես ճղղում, կարծես թե մորթում եյին
իրեն:

— Ես ո՞վ ե... Գտել եմ... Հրես... Բռնե-
ցեք... Վայ... Վայ... Բռնեցեք:

Յեվ ուզում է աղջկանը կծի: Աղջիկը
վախից վեր է թռչում, աչքերը բաց անում,
տեսնում է պառկած է իրենց տանը, իր
ննջարանում ու ես բոլորը յերազ է յեղել:



Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Մշակույթի ն. Մանուկյան

Գլավիտի լիազոր Ղ. 3575. Հրատ. 4182.

Պատվեր 31. Տիրաժ 5000.

Թուղթ 72×105. Տպ. 2 $\frac{1}{2}$ մամ.

Մեկ մամ. 16320 նիշ. Հեղ. 1 $\frac{1}{10}$

Հանձնված է արտոգրության 19 հուլիսին, 1937 թ.

Մտորագրված է տպագրելու 23 փետրվարի 1938 թ.

Գինը 50 կոպ.

Գեանրատի I-ին տպարան, Յերեվան, Լենինի փող. 65



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

207

Л. ТОЛСТОЙ
ТРИ МЕДВЕДЯ
гиз. Арм. ССРЕРВАН

ՀՀ Ազգային գրադարան



NL0386926

5379